



ՀՀ ԿԳՆ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՅԻ» ԿՐԹԱԳԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ

“MKHITAR SEBASTATSI” EDUCATIONAL COMPLEX
MINISTRY OF SCIENCE AND EDUCATION OF THE REPUBLIC OF ARMENIA

0064, Երևան. Ա. Բաբաջանյան 25 հեռ: 74 11 12. 091 43 10 99. info@mskh.am www.mskh.am
25 A. Babadjanyan str., Yerevan, tel: (374 10) 74 11 12, (374 91) 43 10 99

12-11-355

07.11.2012թ.

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի նախարար.

Հոկտեմբերի 19-21-ին կրթահամալիրի Գեղարվեստի ավագ դպրոցը Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկում կազմակերպել էր իր առաջին պլեները. նկարիչ դասավանդողների և սովորողների խումբը ստեղծագործական աշխատանքի անմոռաց երեք օր անցկացրեց այնտեղ: Պլեները լուսաբանվեց [mskh.am-ում](http://mskh.am), ստեղծվեցին ֆիլմեր, կազմակերպվում է ցուցահանդես: Արդյունքում պլեները՝ որպես պարբերական ստեղծագործական հավաք, ներառվեց Գեղարվեստի ավագ դպրոցի ծրագրում և արտացոլվում է ՀՀ բնապահպանության նախարարության աջակցությամբ հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքներում, դենդրոպարկերում և անտառապարկում իրականացվող էկոկրթական նախագծերի մեջ:

Կրտսեր դպրոցականներն իսկապես վայելեցին [աշունը Ջրվեժի անտառապարկում](#): Շնորհակալություն կրթահամալիրի սովորողներին ընձեռված հնարավորության համար: Ընդունեք Գեղարվեստի ավագ դպրոցի նվերը՝ պլեների CDպատումը:

Նախարարության առաջարկով Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի արգելոցներ և ազգային պարկեր» և [ամենամյա 3-րդ էկոտուրի](#) ծրագրերի նախագծերը: Խնդրում ենք քննարկել այն հաստատելու և համատեղ իրականացնելու համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ՝

ԱՇՈՏ ԲԼԵՅԱՆ

info@mskh.am